ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հուլիսի 2025 թվականի N 1153-Ա

ԳՈՒՐԳԵՆ ՎԱԽԹԱՆԳԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄՈՋ ԳՅՈՒՂ, 3-ՐԴ ՓՈՂՈՑ 8 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-112-0430-0015 ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0.29027 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱԿԵՐԵՍՆ ՈՒՂՂԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի կադաստրային քարտեզը, Գուրգեն Սուքիասյանի դիմումը, անձնագրի պատճենը, սեփականության իրավունքի թերի կազմված՝ N 1114279 վկայականը, «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊ ընկերության կողմից կազմված հողամասի և շինության հատակագիծը, վարչական ղեկավարի կողմից 30/06/2025թ. տրված N 4003 տեղեկանքը, Ալավերդի համայնքի ղեկավարի 10.06.2025թ. N 921-Ա որոշումը՝

որոշում եմ.

1.Գուրգեն Վախթանգի Սուքիասյանին պատկանող, կադաստրային 06-112-0430-0015 ծածկագրով հողամասի մակերեսը ուղղել և հաստատել փաստացի ճիշտ 0.29027 հա մակերեսը՝ համաձայն որակավորում ունեցող չափագրող կազմակերպության կողմից տրված հատակագծի:

2. Հիմք ընդունելով, որ 29.10.2004թ. գրանցված սեփականության իրավունքի N 1114279 վկայականը թերի է կազմվել և վկայականում բացակայում եմ շինության տվյալները և հաշվի առնելով կադաստրային քարտեզի տվյալները, որտեղ արտացոլված է շինությունը՝ վերականգնել Ալավերդի համայնքի Ամոջ գյուղ, 3-րդ փողոց, 8 հասցեում գտնվող, կադաստրային քարտեզի 06-112-0430-0012 ծածկագրով, 0.29027 հա մակերեսով հողամասում առկա, այլ անձանց իրավունքները և օրենքով

7) Սակարկությունների ընթացքում վճարումները կատարվում են Հայաստանի Հանրապետության դրամով:

5. Աճուրդի անցկացման մասին տալ հայտարարություն զանգվածային լրատվության միջոցով և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների http://www.azdarar.am պաշտոնական ինտերնետային կայքում, ինչպես նաև հայտարարությունը տեղադրել համայնքի պաշտոնական համացանցային կայքում և աճուրդի կայացման վայրում (Ալավերդու համայնքապետարանի վարչական շենքում) ցուցատախտակի վրա զետեղել հրապարակային ծանուցումը՝ աճուրդի կայացման օրվանից առնվազն մեկ օր առաջ: Հայտերի ընդունման վերջնաժամկետ սահմանել 2025 թվականի օգոստոսի 20-ը, ժամը՝ 17:00:

6. 2025 թվականի օգոստոսի 26-ին կայանալիք աճուրդին մասնակցելու համար ներկայացվող հայտերի ընդունման, համապատասխան արձանագրությունները և աճուրդի հետ կապված անհրաժեշտ այլ փաստաթղթերը կազմելու համար պատասխանատու անձ և աճուրդավար նշանակել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդու համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Հարություն Ձավարյանին:

1)Աճուրդավարին և աշխատակազմին՝ կատարել նախապատրաստական աշխատանքներ, կազմակերպել և ստեղծել համապատասխան պայմաններ 2025 թվականի օգոստոսի 26-ին կայանալիք աճուրդն անցկացնելու համար:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ **Հ. ՁԱՎԱՐՅԱՆ**

2025թ. հուլիսի 16
ք. Ալավերդի